ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» հոկտեմբեր 2013թ. N295

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Մաշտոցի փողոցի N124 տան բնակիչ Համլետ Մելքոնյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի հունիսի 28-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Համլետ Մելքոնյանին հատկացնել 40000/քառասուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան / սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

40,0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի ՍՕՏԳ-ի կողմից ք. Արմավիրի Մաշտոցի 124 տան բնակիչ Համլետ Մելքոնյանի ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունից պարզվեց.

Համլետ Մելքոնյանը հաշվառված է նշված հասցեյում, բայց փաստացի բնակվում է Հայրենյաց 32շ 10 բնակարանում, քանի որ իր բնակարանի հոսանքը անջատված է պարտքերի պատճառով: Համլետ Մելքոնյանը բնակվում է կնոջ և երկու անչափահաս երեխաների հետ միասին: Համլետ Մելքոնյանը Ղարաբաղյան պատերազմի մասնակից է, երկրորդ խմբի հաշմանդամ է և ստանում է 73800դրամ կենսաթոշակ: Ընտանիքում, ըստ իրենց բանավոր հայտարարության, ոչ ոք չի աշխատում: Ընտանիքը հաշվառված չէ Արմավիրի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, քանի որ անապահովության միավորը փոքր է սահմանայն միավորից:

ԱՐՄԱՎԻՐԻ ՍՕՏԳ-Ի ՊԵՏ՝ Ռ.ԱՐՏԵՆՅԱՆ

կատարող՝ Ա. Աթոյան

28 06.2013թ

40.0

19.04.2010թ թիվ 135 40.0

10.03.2011թ թիվ 57

20.02.2012թ թիվ 66 60.0